են, ***զմարմինս իւրեանց ի խաչ հանեն կարեօքն և ցանկութեամբք հանդերձ»***», ընդգծված հատվածը Դավրիժեցին ներհյուսում է իր խոսքին՝ ամբողջացնելու համար Մելքիսեթ աբեղայի դիմանկարը. «...երկս և աշխատութիւնս կրեաց ի վերայ արտաքին գրոց, զի թող զայլ ժամանակսն, զոր ընդ ընկերացն, և կամ չափաւոր ճգնութեամբ զտքնութիւն կրեալ էր, այլ յատուկ տասն ամ առանց թուլանալոյ և ներելոյ ինչ, ***զմարմինն իւր ի խաչ բարձեալ՝ կարեօք և ցանկութեամբ հանդերձ ըստ Պօղոսի***...» (էջ 315):

Այս կերպ, Աստվածաշունչը ներկա է «Գիրք պատմութեանց» աշխատության գրեթե բոլոր էջերում՝ ունենալով բազմաբնույթ կիրառություն: Ինչպես կարելի է դատել վերը բերված օրինակներից, ինտերտեքստուալ հարաբերությունների առումով Դավրիժեցու պատմագիրքը հիմնականում մնում է ինտերտեքստուալության հիմնական ձևերից ***մասնակցության***, հազվադեպ՝ նաև ***ձևափոխության*** մակարդակին: Աստվածաշնչյան տեքստի ***ժխտման*** ձևը Դավրիժեցու մոտ, հասկանալի պատճառներով, իսպառ բացակայում է: